№ 31 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 10 ՓԵՏՐՈՒԱՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ

Տարեկան	10 ռուբ.
Կէս տարին	6 ռուբ.
Ամսական	1 ռուբ.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՄԱՐ

Տարեկան	12 ռուբ.
Կէս տարին	7 ռուբ.

Բաժանորդագրութիւնը ընդունւում է իւրաքանչիւր ամսի սկզբից, և պիտի վերջանայ անպատճառ յետագայ որևէ ամսի վերջին.

Փետրուարի մէկից մինչեւ տարւայ վերջը արժէ 10 ռուբլի.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՐ. և ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹ. ՉԻ ԸՆԴՈՒՆՒՈՒՄ

Հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել 20 ԿՈՊԷԿ (կարելի է և նամականիշով) և հին հասցէն, առանց որի դիմումները կը մնան ԱՆՀԵՏԵՒԱՆՔ.

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ 1916 ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀՈՐԻԶՈՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 10 ՓԵՏՐՈՒԱՐԻ № 31

ԱՌԱՆՁԻՆ №-Ը ԱՄԵՆ ՏԵՂ 6 ԿՈՊ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԸՆԴՈՒՆՒՈՒՄ ԵՆ ԱՄԵՆ ԼԵԶՈՒՈՎ.—1-ին երեսի վրայ տող (պետիտ) 10 կոպ., Կովկասից դուրս 20 կոպ., 4-րդ երես 5 կոպ., Կովկասից դուրս 10 կոպ.

ԱՊԱՌԻԿ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՉԵՆ ԸՆԴՈՒՆՒՈՒՄ

Խմբագրութիւնը բաց է 9—3 ժամ., գրասենեակը 9—3 ժ. ցերեկ. և 6—8 ժ. երեկ.

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԽՄԲԱԳՐԻ ՄՕՏ ժ. 2-ից մինչ 3-ը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, Редакція Газеты „Оризонъ". Сололакская ул., № 6, кв. 1, Телеф. № 15—57. կամ Tiflis (Russie, Caucase), Redaction „Horizon".

ՕՐՈՒԱՅ ԿԱՐԵՒՈՐ ԱՆՑՔԵՐԸ

Ռուսաց արևմտեան ճակատում փոփոխութիւններ չկան։

Սև-ծովի եզերքին ռուսաց ականակիրները ոչնչացրել են 13 առագաստանաւ։

Ծովամերձ շրջանում թիւրքերը դուրս են քշւած Վիցէ-գետի միւս ափը։

Երզրումի շրջանում ռուսները նորից գերի են վերցրել մի քանի հարիւր ասկեար, յարձակւում են գործել լեռնեբում թիւրքական մի զօրասիւնի վրայ, ցրիւ տւել և խլել դաշտային 3 թնդանօթախումբ։

Մուշի շրջանում ռուսական հեծելազօրը յարձակւում է գործել թիւրքական խոշոր ուժերի վրայ, որոնք թողել են շատ սպանւածներ և գերիներ։

Պոլսի մօտ կենտրոնացած և Եգիպտոսի համար նշանակւած գերմանական պահեստի բոլոր զօրքերը հրաման են ստացել միանալու թիւրքական զօրքերի հետ Երզրումի տակ։

Լիւէր-փաշան և ֆոն-Սանդերսը մեկնել են Սուրիա պաշտպանողական միջոցներ ձեռք առնելու ռուսների յառաջխաղացման դէմ։

ԹԻՒՐՔԱՀԱՅ ԱՂԷՏԸ ԵՒ ՀԱՅ ԿԱՄԱՒՈՐ. ՇԱՐԺՈՒՄԸ

II

Նախքան գերմանօ-եւրոպական պատերազմի յայտարարուիլը, առիթ ունեցանք այցելելու Պոլիս և Սամսոն։ Պոլսում առիթ ունեցանք տեսնւելու մեր նախկին թիւրք ուսանող ընկերների հետ, այժմ արդէն պաշտօնեաներ, ինչպէս նաև օսմանեան խորհրդարանի հայ պատգամաւորների հետ։ Պալքանեան պատերազմից յետոյ, թիւրքերի մէջ շատ աւելի դառնացած կերպով շեշտւած էր ատելութեան նայրենասիրութիւնը, և թշնամութիւնը դէպի այն բոլորը, ինչ որ իսլամական կամ գերմանական չէր։

Ամենահետաքրքրաշարժը՝ այն պետական-իսլամական խնամատարութիւնն էր, որ սկսել էր տարածւել տնտեսական կեանքի վրայ։ Կառավարութիւնը ոչ միայն նպաստներով քաջալերում էր իսլամների տնտեսական ձեռնարկները, այլ իր աջակցութիւնն էր նւիրում յաճախորդներ հայթայթելու համար իսլամ հաստատութիւններին, անպաշտօն պոյքոթի ենթարկելով քրիստոնեայ հաստատութիւնները։ Մինչև անգամ նա կանգնեցնում էր գործակալներ՝ օտարակրօն հաստատութիւնների առաջ, և նրանց միջոցաւ արգելում իսլամներին և իսլամուհիներին գնումներ անել այնտեղ։

Ամենածանր նախազգացումներով պատրաստւում էինք վերադառնալ Կովկաս, երբ ընդհանուր պատերազմի և թիւրքական ընդհանուր զօրակոչի յայտարարումով կաշկանդւեցինք Սամսոնում, պարտաւորւած իբրև զինւոր ծառայելու։

Մեզ մնում էր հաշտւել պայմանների հետ և շահագործել նրանց ապագայի համար։ Շնորհիւ մեր ծանօթութիւններին, հեշտ էր մեզ համար աղբիւրներ ճարել։ Իթթիհատի կենտրոնը փոխադրւել էր Սամսոն և այս հանգամանքը աւելի նշանակութիւն էր տալիս մեր քաղելիք տեղեկութիւններին։

Զինւորական շարժումների մասին մեր հաւաքած ծանօթութիւնները ժամանակին հաղորդել ենք հարկ եղած պաշտօնատունը, և դէպքերը ցոյց են տւել, թէ որքան ճիշտ են եղել դրանք։ Համիսլամական շարժումի ծրագրի մասին ևս առիթ ունեցել ենք որոշ շրջանակներում յայտնելու։ Արդէն ակտիւ գործունէութեան նշաններ երևում էին զանազան իսլամական կենտրոններում։ Իսկ ինչ վերաբերում է հայերի հանդէպ ծրագրւած քաղաքականութեան, նոյնպէս առիթ ենք ունեցել մեր տեղեկութիւնները հաղորդելու, և սակայն նրանք գտել են շատ սկեպտիկ ընդունելութիւն։ Դժբախտաբար դէպքերը եկան նորից ապացուցանելու նրանց ճշտութիւնը։

Մենք մեզ թոյլ ենք տալիս՝ այստեղ՝ մանրամասն մէջ բերելու մի խօսակցութիւն, որը նօթագրել ենք ժամանակին, և որը տեղի է ունեցել մի ծանօթ իթթիհատական սպայի և մեր միջև Սամսոնում։ Մեր արտայայտած կարծիքները այդ խօսակցութեան ընթացքում եղել են նպատակաւոր և ոչ թէ մեր անհատական համոզումները։

— Կարծեմ հայերդ այնքան էլ գոհ չէք մեր բռնած ուղղութիւնից, չէ՞։

— Ով ըմբռնում է օսմանեան շահերը՝ նա միայն գնահատել կարող է ներկայ հայրենասիրական ոգևորութիւնը։

— Զարմանալի է։ Դուք իբրև հայ, պէտք է տարբեր մտածէք։

— Իսկ իբրև օսմանցի, ո՞չ։

— Դուք ինչպէս էք ըմբռնում մեր շահերը։

— Ես կարծում եմ, որ Թիւրքիոյ համար միակ բարեկամ պետութիւնը Գերմանիան է, որովհետև միայն Գերմանիան կարող է անշահախնդիր վերաբերւել դէպի մեզ, չունենալով որ և է իսլամական գաղութ։ Միւս պետութիւնները բոլորն էլ վախով և դժկամակութեամբ միայն կարող են դիտել մեր վերակազմւիլը և մեծանալը, որովհետև խալիֆան մեր սուլթանն է։

— Շատ ճիշտ է, բայց ինչ էք կարծում, աւելի խելօք չէ՞ր լինի չէզոքութիւնը։ Այս պատերազմը կարող է մեզ նիւթապէս քայքայել։

— Առանց մասնակցելու էլ մենք նիւթապէս քայքայւեցինք։ Գուցէ Գերմանիան մեզ աջակցի, երբ նրա հետ գնանք։ Եւ յետոյ, ինձ թւում է, որ այս տեսակ մի րոպէին տնտեսական նկատումները պէտք է երկրորդական տեղ բռնեն։ Ներկայ պայքարը մահու և կենաց հարց է մասնաւորաբար Թիւրքիոյ համար։

— Զարմանալի է, դուք յայտնում էք այն կարծիքները, ինչ որ մեր ժողովներում են յայտնում։

— Այդ նշանակում է, որ մարդ կարող է հայ լինել և մտածել իբրև օսմանցի։

— Գիտէք ինչ, եթէ Գերմանիան յաղթէ՝ արդէն մենք վերջացած ենք. մեր երկիրը պատառ-պատառ են անելու։ Իսկ եթէ յաղթէ՝ մենք կը ստանանք մի աջակցութեան փոխարէն, մեր բոլոր ցանկութիւնների իրականացումը։ Այդ բացայայտ է։ Կապիտուլասիոնները կը ջնջւեն, եւրոպական կոնտրոլը կը վերանայ, և մի անգամ ընդ միշտ կը վերանան յանուն քրիստոնեայ ցեղերի կատարւած լիբբ միջամտութիւնները, որոնք մեր տունն են քանդել։

— Այս վերջին կէտում մեղաւորը դուք էք. միշտ դուք էք առիթ տւել դրանց, ձեր կողմնակալ քաղաքականութեամբ դէպի վայրենի և խաղաղութիւնը խանգարող ցեղերը, և ձեր ... դէպի հայերն ու յոյները։

— Եղբայր, ինչպէս վստահանանք ձեզ, երբ անկարող ենք բաւարարել ձեր պահանջները։ Դուք ուզում էք, որ քիւրդերին զսպենք, հողային հարցը կարգադրենք, ձեզ հաւասար իրաւունքներ տանք ամեն բանում։ Ի՞նչ էք կարծում, մենք կարո՞ղ ենք մրցել ձեզ հետ այդպիսի պայմաններում։ Պալով յոյներին, նրանք երբեք չեն կարող հաւատարիմ լինել մեզ, որովհետև նախ սաստիկ կրօնամոլ լինելով կապւած են ռուսին, իսկ Յունաստանի գոյութիւնը, նրանց աչքերն ու սրտերը կապում է իրենց պալիկարիանների։ Այսքան այլազան ցեղերով, կրօններով, կուլտուրաներով չէ կարելի ուժեղ, զօրաւոր պետութիւն կազմել, այդ բոլորը պէտք է որ ի մի ձուլւեն։ Այ, տեսէք Գերմանիան, ինչպէս է վարւում լեհերի և Ալզաս-Լորէնի հետ։ Բայց եթէ մենք անենք նոյնը, մէկ էլ տեսար Անգլիան, Ֆրանսիան, Ռուսաստանը մէջ են մտնում. «Հայերին մի դիպչէք, յոյներին մի փառէք», Դէհ՜ վերջապէս բաւական է՜…

— Բայց կարծում էք ճիշտ է մի ազգ ձուլելը, երբ մանաւանդ դուք չէք ասում, որ ուժեղ կուլտուրա չունէք նրանց դէմ մրցելու համար…

— Դժւար է խաղաղ միջոցներով, իսկ ռաս ճեռս բռնի, ուժեղ միջոցներով։ Մեծացած ծառը չի ծռւի, բայց բարակ, նորաբոյսը ուզած ձևը կարող է ստանալ։

— Իսկ մեծ ծառերը…

— Նրանց էլ կարելի է կտրել… Ի հարկէ չեմ ուզում ասել, թէ այդպէս էլ կ'անէք. գուցէ աւելի մեղմ մի միջոց գտնէք. անշուշտ կը գտնէք։ Ես իբրև օրինակ միայն ասացի…

— Հասկանում եմ… Նշանակում է այս կամ այն կերպ դուք պէտք է լուծէք այդ հարցերը այս պատերազմի ընթացքում։

— Ի հարկէ, երբ բոլոր հաշիւները իրար կրծելով են զբաղւած։

— Այդ անշուշտ տրամաբանական է և համապատասխան ձեր շահերին։ Բայց ինչ էք կարծում, փոխանակ խրատելու, աւելի լաւ չէ՞ր լինի հեռացնել, ցրւել ձեզ անհաճոյ տարրերը, օրինակ…

— Բշել նրանց... խնդրեմ ասացէք ձրանցից էք լսել դուք այս բոլորը։

— Ոչ ոքից, այժմ ձեզանից եմ լսում։

— Այս խօսակցութիւնը, ի հարկէ, մեր մէջ կը մնայ, չէ՞։

— Դուք ինձ ոչինչ նոր չէք ասել. բայց կարող էք միամիտ լինել։ Ինչ որ պատահելու է՝ կը պատահի, ոչ դուք կարող էք արգելել, ոչ ես։ Գնացէք!

— Լսեցէք, մենք եղել ենք վաղուցւայ ծանօթներ։ Ձեզ մի խորհուրդ ունիմ։ Շուտով ժամանակաւոր զօրացրւում է լինելու 35-ից մինչև 27 տարեկանները։ Օգտւեցէք այդ առիթից և հեռացէք, գնացէք։ Ահա ձեզ իմ բարեկամական խորհուրդը։

— Արդէն բանը այդտեղ է հասել, այո…

— Դեռ ոչ, բայց շուտով կը հասնի։ Մահչէր է լինելու, մահչէր։ Լսեցէք իմ խորհուրդը և հեռացէք, մանաւանդ այստեղից։ Ցտեսութիւն։

Այս տեսակցութիւնից հազիւ մի շաբաթ առաջ, որոշ հիւպատոսարանի միջոցաւ մեզ յայտնեց, որ հայերը լաւ կանեն, եթէ միջոցներ մտածեն թէ քաղաքը էւակուացիայի ենթարկւելու պարագային ինչ կերպ կարող են ապահովել իրենց ընտանիքների փոխադրութիւնը։ Գրեթէ միաժամանակ հայոց թաղի վերև գտնւող զօրանոցի առաջ տեղաւորւեց մի թնդանօթ, որի սպառնական բերանը ուղղւած էր ճիշտ թաղի վրայ։

Եւ երբ հնարաւորութիւն ստեղծւեց հեռանալու այդ գեհենից, մեր հարազատներին հրաժեշտ տալիս, զգում էինք, որ այդ վերջին հրաժեշտն էր…

Ինչպէս տեսնւում է այս ապրւած փաստերից, նախ քան կամաւորական շարժումի գաղափարն անգամ յղացւելը, գործադրութեան դրւած հրէշային ծրագիրն արդէն վաղուց մշակւել էր։

Կամաւորական շարժումը միակ և յետին ճիգն էր փրկելու գոնէ սահմանամերձ շրջանները, Վասպուրականը, Ալաշկերտը, Մշոյ դաշտը, Սասունը, Բասէնը։ Թէ որքան այդ յաջողւեց, արդէն ծանօթ է։

Այնքան ծանր պատասխանատւութիւններ ծանրանում են մեր վրայ, որ հարկ չկայ աւելացնել, նոյնիսկ մի րոպէ, այն անհեթեթ ու ծանր ամբաստանութիւնն էլ, թէ մեր ազատագրման վերջին ճիգը ծնունդ է տւել հրէշային ոճրին։

Այնքան շատ պարտականութիւններ կան կատարելու ներկայումս, որ կարող ենք ինքնակոչ դատաւոր կամ դատախազ լինելու աւելորդ պարտականութիւնը մի կողմ թողնել։

Դառն ու մեծ է կորուստը, բայց անցեալը ողբերով, աղեկէզ գալարումներով յետ չի գալ, և չի դարմանւիլ։

Զկորցնենք մեր գլուխները, և աշխատենք մնացածը պահպանել։

Թողնենք մեռեալները թաղեն իրենց մեռեալները։

Գաս. Իփ.

ԻՆՉՊԷՍ ԳՈՐԾ ՀԱՅԹԱՅԹԵԼ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐՈՒՆ

Ի՞նչ բրաւ կամ կրնի «Աշխ. Բիւրօ»-ն

III

2. ԱՐՀԵՍՏ ՉԳԻՏՑՈՂՆԵՐԸ

Ասոնք խոշոր թիւ մը կը կազմեն. այս շարքին կը գտնւին բոլոր գիւղացիներ, առևտրականներ, անչափահաս դպրոցականներ, ուսուցիչներ են։ Բազմանդամ ընտանիք ունեցողները բաւական թիւ կը ներկայացնեն, նպաստ չեն ստանար, գործ չունին, լեզու չըգիտեն, թողնւած են ի սաստ ճակատագրի…

Մարդուս սիրտը կարիճնոտի, երբ կը տեսնայ ընդունակ, կենսախինդ դպրոցական պատանիները, որոնք վաղւայ հայութեան ինտելիգենտ մասը պիտի կազմեն, եթէ հնարաւորութիւն տրւէր իրենց քանի մը տարի «Ներսիսեան»-ի կամ միւս թեմական դպրոցներու մէջ իրենց ուսումը շարունակելու, բայց ըմ մարդ կուտայ. Ներսիսեանի տեսուչը չի ընդունիր, իսկ թեմականները դրկելու մասին հոգացող չկայ. և կը կորսւին անոնք կեանքին մէջ, ով գիտէ ինչպէս իրենց հացը ձեռք բերել տենելով։ Այդպիսիներէն փոքր մաս մը Բիւրօի անդամները մեծ դժւարութեամբ յաջողեցան խանութներու և վաճառատուներու մէջ ծառայութեան ընդունել տալ… ուր նորքա օրական 20-ական կոպէկ պիտի ստանան ու ապրեն, ապրեցնելով նաև իրենց խեղճացած մայրն ու եղբայրները։

Անցեալ օրը մէկը մեր լաւագոյն և սրատես գործիչներէն, որը իր ժամանակի մեծ մասը տւած է անօգնականներ այս անգործները տեղաւորելու խնդրին, ունեցաւ այն միտքը, թէ պէտք է միջոցներ ստեղծել, այդ ընդունակ պատանիները հաւաքել մի տեղ, վարձել կարող ուսուցիչներ, որպէսզի անոնց պատրաստեն միջնակարգ կրթութեան մը ծրագրով, սորւեցնեն ռուսաց լեզուն, որ գոնէ յառաջիկայ տարին անոնք այդ կերպով կարողանան Ներսիսեան կամ մի ուրիշ տեղ ընդունւել։ Ես կը յուսամ, որ այդ բարեսիրտ անհատը ձեռնարկէ այդ գործին, իսկ թէ քանիները պիտի ըլլան ուժ տւող այդ ձեռնարկին, այդտեղ է, որ կը տատամսիմ…

Արհեստ չիմացողներէն մաս մը, մօտ 15—20 հոգի սանիտարական գործով հոս և հոն ճամբւեցան, խոշոր մաս մըն ալ Բաթում աշխատանքի (ճամբու վրայ ծառայելու) կը դրկւին, իսկ մնացածները կը մնան այստեղ, ընտանիքները չեն կարող թողուլ, սոված և անապաստան կը ցանկան մնալ այս հոգեվարքային դրութեան մէջ, քան թէ Թիֆլիսէն քայլ մը ալ անդին նետել։ Եւ մեղադրելի ալ չեն։

Ամեն օր սովորական դարձած խօսակցութիւն մըն է, որ մեր մէջ տեղի կունենայ.

— Հայրենակից, կերթա՞ս Բաթում աշխատելու, օրական 9 արասի կուտան։

— Չեմ կրնար երթալ, պարոն։

— Ինչո՞ւ է. դուն կեանքիդ մէջ նիչ դարիբութեան չե՞ս գացած Պոլիս կամ Ռուսաստան։

— Գացած եմ, բայց էն ժամանակ մեր տունը չէն էր. հայրս ողջ էր, հօրեղբայրներս կային։ Հիմա ընտանիքս ուր ումուտին թողնեմ երթամ, պարոն։ Թէ Աստւած ուզես, կը հաւատաս, տանիքներ չան ընտանիքից մնացենք ես, իմ կին և երկու տղայ, ճրուն թողում երթամ։ Մեծ զաւակս էաս փեշ ամիս ա, կոչել ա, կը փնտրիմ, չեմ կարա գտնի, ինչպէս երթամ, էստեղ գործ մը գտէք, ծառայութիւն մը. ինչ էղնի, կանեմ…

Ի՞նչ պիտի պատասխանես ասոր, ոչինչ. չես կարող ոչ մեղադրել ծուլութեան, ոչ ալ ծրիակերութեան մէջ։

Անցեալ օր «Հորիզոն»-ի մէջ կարդացի գրւածք մը, երբ տիկին մը ամիսներով տրամադրութիւն չունենար խօսելու և ծիծաղելու, որովհետև… իր սիրեցեալ շունը սատկած է եղեր, իսկ երեկ ես ականատես եղայ երևոյթի մը, որու առաջ ոչ մի սիրտ չի կրնար տոկալ, եթէ նա մարդկային է…

Վանեցի շատ երիտասարդ նորահարս մ'է եկած—բարեկեցիկ ընտանիքէ մը—ամուսինը Ամերիկա կը գտնւի. ամուսնի եղբայրը իր ընտանիքն առած՝ Ռոստով գացեր է և իր ուսուցչութիւնը ծախած, հոն կոչիկ կը սըրբէ… ինքը մնացած է իր մի զաւկի և կեսուրի հետ, երկու օր առաջ թաղած է իր տասերեք ամսական երեխան, և այժմ կըսէ.

— Թուղթ մը գրեցէք ինձի համար, երթամ վերմակներ տանեմ կարելու. առաջ երեխաս արգելք կըլլար, այժմ կրնամ աշխատիլ… խօսած ժամանակը արտասուքներ կը կաթկաթին…

Սուգ պահելու առնեը չէ. սփափական հարազատի կորստեան կսկիծը կը ջանայ հեռու վանել, իր կեսուրի և զաւակի գոյութիւնը պիտի պահպանէ։

Մօտակայ նկատերինենֆելդ գիւղէն ութ հոգի բասենցի գիւղացիներ եկած են, երբ պարզամտօրէն, որպէսզի իմանան, թէ ինչ բան է սա «Աշխատանքի Բիւրօ»-ն, եթէ իրապէս գործ կայ, մնացեալներն ալ գան։

Երբ ես կը բացատրեմ, որ գործ կարելի է գտնել միմիայն Թիֆլիսի

մէջ եղող գաղթականներու համար, և այդ նպատակով է, որ հիմնուած է «Աշխատանքի Գրասենեակը», նոքա «Հորիզոն»-ը ձեռքին կը պատասխանեն.

— Կաղէթի մէջ գաղթականներուն գործ պիտի տանք գրուած է, մենք ալ եկանք եկանք. կաղէթը կը գրէ, թէ տաճկաստանցիները թամբալ (ծոյլ) են, մենք աշխատելու ենք եկած, գործ տուէք...

Սուտ չէ, պարոններ, այս ժողովուրդը, միայն մի պատասխան և հանգիստ տուէք անոր ողջ մնացող անդամներուն, որոնք ամենահեռու տեղն ալ կերթան աշխատելու:

Արհեստ չգիտցողներէ փոքր մաս մը տուներու մէջ են մտած և կամ գործունէութիւն կընեն շատ չնչին ռոճիկով, քանիները կարելի եղաւ գործարաններու մէջ մտցնել տալ, իսկ մնացեալ ջախջախիչ մեծամասնութիւնը ալ ձանձրացած է գրասենեակի դուռը ափ առնելով: Մտերս պիտի բացուի կօշիկ սրբողներու խանութ մը. 8—10 հոգի ալ հաւանաբար կը տեղաւորուին, իսկ խոշոր մեծամասնութիւնը դեռ անգործ կը մնայ:

Եթէ մենք լրջօրէն վերաբերուինք այս հարցին, եթէ գործ գտնելու մըտահոգութիւնը մեր առաջին խորհելու առարկան ըլլայ, մի մարդ անգամ չի մնար անգործ:

Առեւտրականներու մէջ կան այնպիսիներ, որոնք կը հաւատացնեն մեզ եթէ 20—30 ռուպլիի չափ փոքրիկ գումարներ ունենան, ձեռքի վրայ առեւտուր ընելով պիտի կարող ըլլան թէ իրենց գոյութիւնը պահպանել և թէ մաս առ մաս, շաբաթական 2—3 ռուբլիով վերադարձնել այդ դրամը: «Բիւրօ»-ն սկսաւ այդ քայլն ալ ընել և շուտով այդ գինքներին ակնատես պիտի ըլլանք:

Բայց հարկաւոր է ոչ թէ այդքան չնչին, այլ գոնէ մի քանի հարիւրական ռուպլիով օժանդակել առեւտրականներուն, որպէս զի անոնք խանութ բանան և անով շահին. Նպաստի յատկացուած հարիւր հազարաւոր գումարներէն չէր կարելի արդեօք մի քանի հազարները այդ նպատակին գործածել: Թրն է հիմնական միջոցը մարդոց հացի տէր դարձնելու, տասնական կոպէկներ տալ, թէ քանի մը հարիւր ռուպլի միանուագ, որպէս զի վերջ տրուի այս համատարած թշուառութեանը:

Բազմաթիւ միջոցներ կան մարդոց գործ գտնելու, միայն թէ մի անգամ ընդմիշտ տարուինք այս գաղափարով և ոյժերը կեդրոնացնենք այս ուղղութեամբ, և եթէ նպաստի յատկացուած գումարներէն կամ Բարեգործականի միջոցներէն անկարելի է այսպիսի ձեռնարկներ ընել, արդեօք բուն իսկ Թիֆլիսի մէջ չենք կարող ստեղծել մարմին մը, որ հանգանակութիւններով, փոխառութիւններով, ներկայացում-դասախօսութիւններով քանի մը հազար ռուբլի գոյացնէր...

Ունինք անգործներու շարքին ուսուցիչներ, դպրոցաւարտներ, գրագէտ-հաշուապահներ են: Գործ չկայ... ուր որ կը զարնեն խեղճերը իրենց գլուխը, բան մը չի կրնար ընել, ուսուցչական պաշտօն չկայ, ուրիշ կարգի գործ գտնելու համար գլուխ ցաւցնող չկայ...

Քանի քանի անգամներ գրեցաւ, խնդրեցաւ որ գաղթականական գործերուն մէջ աշխատանք տան այդպիսիներուն, թողուն վերջապէս այն դատապարտելի կարծիքը, թէ տաճկահայերու մէջ չկան մարդիկ, որոնք խելօք բան մը ընելու ընդունակ ըլլան, բայց կարեւորութիւն տուող չեղաւ:

Անցեալները 4—5 անդամի տէր տաճկահայ ուսուցիչ մը պաշտօնէ հանած են, որուն բարեհաճած էին երկար անգործ թողնելէ յետոյ 45 ռ. ամսականով գործ մը տալ, բայց յետոյ ինչ ինչ պատճառներով այդ գործը վերստին տուած են ուրիշի մը (ռուսահայ) 80 ռ. ամսականով և առաջինին առաջարկած են կրկնակի ծանր ուրիշ գործ մը — 30 ռուպլիով, երբ վերջինս կատարէ այդ մասին.

— Որոշուած է գաղթականներուն 30 ռ.-էն աւելի ամսական չտալ, կը պատասխանեն:

— Ի հարկէ, կռօճեր են էլի, ի՞նչի 30 ռ.-ից աւելի տալ, այդքանն էլ շատ է...

Իսկ մեր խեղճ ու կրակ ուսուցիչները թող թափառին խելակորոյս և շշմած մտքերով Նազարեանի ճաշարանէն մինչև Բարեգործականը, անկէ ալ մինչև Ուսուց. Կենտ. կոմիտէի դռները...

Բաունակ

ՊԱՏԵՐԱԶՄ

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏ. ՀԵՌ. ԳՈՐԾ.)

ԳԵՐ. ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ՇՏԱԲԻՑ

8 փետրուարի

Արեւմտեան ճակատ. — Դւինսկի տակ Շլոսբերգի մօտ մեր արտիլերիան ռմբակոծում էր գերմանացիների մի խոշոր խումբ, որը եռուն աշխատանքներ էր կատարում. գերմանացիները փախան: Իլլուկստի մօտ մենք պայթեցրինք 5 վագոն գերմանական 5 ամրութիւնների տակ և գրաւեցինք գոյացած փոսերը. Ծայրի երկու փոսերի համար եռուն կռիւ էր տեղի ունենում, բայց վերջ ի վերջոյ այդ փոսերն էլ մնացին մեր ձեռքին: Փետրուարի 6-ին, երեկոյեան ժամը մօտ 11-ին, մեր օդաչուները Բուչաչ կայարանի և քաղաքի վրայ մի քանի տասնեակ ռումբ նետեցին: Մի փթանոց ռումբերից մէկի ընկնելուց յետոյ նկատուած էին մի մեծ կարմրաւուն բոց և մեծ ծուխ: Մեր „Второй“ օդանաւը Մանաստերժիսկօ կայարանի վրայ նետեց 10 հատ երկու փթանոց, 5 հատ հինգ փթանոց ռումբեր և մի արկղ նետեր: Դնեստրի վրայ Ուսեչկօի շրջանում մեր կրակով դադարեցրինք մեր խրամատներին մօտենալու համար թշնամու զօրամասերի արած փորձերը:

Սեւ-ծով. — Մեր ականակիրները Անատոլիայի ափերին ոչնչացրին 13 առագաստանաւ:

Կովկասեան ճակատ. — Ծովամերձ շրջանում մեր զօրամասերը դուրս քշեցին թիւրքերին Վիցէաու գետի շրջանից և յետ շըպրտեցին դէպի Բէյխկ-դերէ գետի այն կողմը: Էրզրումի շրջանում թշնամուն հետապնդելիս մենք նորից գերի բռնեցինք մի քանի հարիւր ասկեարներ: Մեր կազակների մի հարիւրակ, վրայ հասնելով լեռներում թիւրքական մի զօրասիւնի, որ բաղկացած էր հետեւակներից և արտիլերիա ունէր, շեշտակի յարձակում գործեց նրա վրայ, ցրիւ տուաւ հետեւակներին և խլեց դաշտային 3 թընդանօթախումբ ու ռումբերի շատ արկղներ: Մուշի շրջանում մեր հեծելազօրը յարձակում գործեց թիւրքական հետեւակ խոշոր ոյժերի և նրանց կից գտնուած մի գունդ սուվարիների վրայ (կանոնաւոր հեծելազօր): Թիւրքերը տեղում թողեցին շատ սպանուածներ և, բացի դրանից, գերիներ վերցրինք:

ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍՐՆ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՃԱԿԱՏՈՒՄ

ԿԱՅԱՆ ԳԼԽԱՒՈՐ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ, 7 փետր.— Փետր. 7-ին Թագաւոր Կայսրը հասաւ արեւմտեան ճակատը: Թագաւոր Կայսրն իր ձին ուղղեց երկու բանակների ներկայացուցիչներին, որոնք ուղարկուել էին [illegible]: Թագաւոր Կայսրը դիմեց նրանց հետեւեալ խօսքերով.

«Պարոնայք սպաներ. յանձին ձեր՝ զօրաբանակների քաջարի զօրքերին յայտնում եմ Իմ ամենաջերմ ու խորին շնորհակալութիւնը՝ ձեր զօրամասերի փառաւոր ու անխոնջ գործունէութեան համար, որի մասին խընդրում եմ հաղորդել ձեր ընկերներին: Ձեզ ցանկանում եմ կատարեալ աջողութիւն: Ձեզ, քաջեր, Իմ սրտագին շնորհակալութիւնը՝ հայրենիքին և Ինձ ձեր անձնուէր քաջարի զինուորական ծառայութեան և այսօրուայ փառաւոր զօրահանդէսի համար: Վստահ եմ, որ ձեզնից իւրաքանչիւրը կը դիմանայ մինչև վերջը և կօգնէ Ինձ ու ձեր ընկերներին՝ վերջնականապէս յաղթելու և ընկճելու մեր յամառ թշնամուն: Այդպէս էլ հաղորդեցէք Իմ կողմից ձեր ընկերներին: Նորից ամենքին իմ սրտագին շընորհակալութիւնը: Աստուած տայ ձեզ ամեն բարիք: Միշտ արի եղէք, ինչպէս Ես ձեզ տեսնում եմ: Ձեզնից նրանց, որոնք վիրաւորուած ու հաշմանդամ են, ինչպէս և Գէորգեան ասպետներին Իմ առանձին շնորհակալութիւնը: Նորից շնորհակալութիւն ձեր ծառայութեան համար»:

«Ուռա» աղաղակները ծածկեցին Նորին Մեծութեան խօսքերը:

Երբ Կայսրը մօտեցաւ Սիբիրեան զօրաբանակին, Նորին Մեծութիւնը բարեհաճեց ասել հետեւեալը սպաներին և զինուորներին.

«Պարոնայք սպաներ: Յայտնում եմ ձեզ Իմ սրտագին և խորին շնորհակալութիւնը ձեր զինուորական քաջարի ծառայութեան համար: Չինական, ճապոնական և ներկայի երեք պատերազմների ընթացքում դուք արժանաւորապէս պահպանեցիք և պահպանում էք ձեր զօրամասերի փառքը: Ամբողջ հոգով ցանկանում եմ ձեզ նոր աջողութիւններ և վերջնական յաղթութիւն՝ մեր ուժեղ և յամառ թշնամու վրայ: Շնորհակալ եմ ձեր ծառայութեան և այսօրուայ զօրահանդէսի համար: Վաղուց էի ուզում տեսնել Սիբիրեան Իմ հրացանաձիգներին և միայն այսօր այդ աջողուեց Ինձ: Շարունակեցէք ծառայել նոյնպիսի քաջութեամբ ու հաւատարմութեամբ, ինչպէս ծառայում էք հիմա և ինչպէս ծառայել են ձեր աւագ ընկերները չինական ու ճապոնական պատերազմների ժամանակ, և օգնեցէք Ինձ ու զօրաբանակի մնացած մասերին վերջնականապէս յաղթելու և ընկճելու մեր յամառ ու ուժեղ թշնամուն: Ձեզ բոլորիդ զինուորական արի ծառայութեան և այսօրուայ զօրահանդէսի համար Իմ սրտագին շնորհակալութիւնը»: Երեկոյեան ժամը մի 7-ին կայսերական գնացքը մեկնեց:

ՏԱՃԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ԱԹԷՆՔ, 7 փետր. — Պոլսի մօտ կենտրոնացած և Եգիպտոսի համար նշանակուած գերմանական պահեստի բոլոր զօրքերը հրաման են ստացել միանալու թիւրքական զօրքերի հետ Էրզրումի տակ:

ԲՈՒԽԱՐԵՍՏ, 8 փետր. — Պոլսից հաղորդում են, որ Էնվէր-փաշան և Լիման-ֆոն-Սանդերսը մեկնել են Անատոլիական երկաթուղով: Ցամառ լուր կայ, որ նրանք գնում են Սըւազ պաշտպանողական գիծ կազմակերպելու՝ որպէսզի դիմադրեն ռուսական բանակի յառաջխաղացմանը, որի հըջողութիւնը մեծ մտահոգութիւն է պատճառում երիտասարդ թիւրքերի շրջաններին:

ԷՐԶՐՈՒՄԻ ԱՌՄԱՆ ՇՈՒՐՋԸ

ՊԵՏՐՈԳՐԱԴ, 8 փետր. — Թագաւոր Կայսրը Կարմիր Խաչի գլխաւոր վարչութեան նախագահ Հոֆմէյստեր Իլյինին արժանացրել է հետեւեալ հեռագրի.

«Ի սրտէ շնորհակալ եմ Կարմիր Խաչի ռուսաց ընկերութեան գլխաւոր վարչութիւնից մեր ռազմական աջողութեան առթիւ արած շնորհաւորանքի համար: Խորապէս գնահատում եմ նրա բոլոր գործիչների անձնուէր ծառայութիւնը մեր թանկագին վիրաւոր հերոսների օգտին:

ՆԻԿՈԼԱՅ»

ԱԹԷՆՔ, 7 փետր.— Մամուլը շարունակում է քննել Էրզրումի առումը: Վենիզելոսեանների օրգան «Աստիբս»-ը, ողջունելով ռուսական զէնքի աջողութիւնը, ասում է. «Ցոյների սրտերը ուրախանալ միայն կարող են, որ խաչը յաղթել է կիսալուսինին»: Հակավենիզելոսեան «Էսպերինոս»-ն ասում է. «Էրզրումի անկումը ռազմական տեսակէտից անհամեմատ աւելի մեծ նշանակութիւն ունի, քան կունենար Պոլսի առումը, որովհետև Թիւրքիան զրկւեց իր մարմնից և պահպանել միայն գլուխը, որը հանդիսանում է նրա մայրաքաղաքը»:

ՍՏՕԿՀՈԼՄ, 7 փետր. — Էրզրումի անկման առթիւ ռուսաց եկեղեցում պատարագից յետոյ հանդիսաւոր մաղթանք կատարուեց:

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ՍՈԼՈՒՆ, 7 փետր. — Գեներալ Սարրայլը այսօր մեկնում է Աթէնք:

ՕԴԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

ԼՈՆԴՈՆ, 7 փետր. — Պաշտօնական հաղորդագրութիւն: Գերմանական երկու բիպլաններ այս առաւօտ թռիչք գործեցին Լովեստոֆտի վրայ և մօտաւորապէս 7 ռումբ ձգեցին մեծ բարձրութիւնից, որից յետոյ անհետացան: Յարձակումից մարդկային զոհեր չեղան. Վնասուած են մի ճաշարան, չէնք ու երկու բնակարաններ: Գերմանական ապարատներն անգամ կերպով հետապնդուեցին երկու ծովային աէրոպլանների կողմից: Գերմանական բիպլանները ռումբեր նետեցին Կիկսինգեկի փարոսի մօտ, մի ուրիշ գերմանական աէրոպլան 6 ռումբ ձգեց Վալմերի վրայ, որի երկու ռումբերով քանդեցան տների երդիկներ: Մի ռումբ ընկաւ արարողութեան ժամանակ եկեղեցու մօտ, որի պատուհանները ջարդուեցան: Մի ռումբ ընկաւ մայթի վրայ, որից սպանուած են մի քաղաքացի և մի նաւաստի: Զոհերի գումարն է՝ սպանուած 2 տղամարդ և մի երեխայ, վիրաւորուած են 2 նաւաստիներ: Բրիտանական երկու աէրոպլաններ Դուվրից հալածեցին գերմանացի օդաչուներին, սակայն չհասան նրանց:

ՌՈՒՍԱՍՏԱՆ

ՊԵՏՐՈԳՐԱԴ, 8 փետր. — Նորին Մեծութիւն Թագաւոր Կայսրը այս փետրուարի 8-ին հաճեց ժամանել Ցարսկոյէ-Սելօ: Ստորագրեց կայսերական պալատի մինիստր գեն.-ադ. կոմս Ֆրեդերիկս:

ՊԵՏՐՈԳՐԱԴ, 7 փետր.— Երկրագործութեան մինիստրի նախագահութեան տակ [illegible] մատակարարման առանձին խորհրդակցութիւնը քննեց մսի գործածութիւնը կրճատելու հարցը: Խորհրդակցութիւնն անհրաժեշտ գտաւ մի շարք միջոցներ ձեռք առնել

ԲԱՐՔԵՐ ԵՒ ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

II

Եւ այնպէս յաճախ էք յիշում մեր իրականութեան հանդէպ Կիկերոնի հռչակաւոր բացականչութիւնը. «Ո՜վ ժամանակներ, ո՜վ բարքեր»...

Թողնենք Բրիւսովին ու հայ բանաստեղծներին, անցնենք այլ կարգի իրողութեանց:

Ո՞ւր կերթայ, յիրաւի, մեր բարքի անիւը, եթէ մամուլի մէջ իւրաքանչիւր մի ակնարկ, փոքր ինչ աննպաստ մի դիտողութիւն ներւային ցնցումներ պիտի պատճառէ ենթականերին: Եւ ինչ կը լինի ազգային խօսքի վիճակը, եթէ նա չկարողանայ արտայայտել ամեն պարագայում ազատօրէն, շիտակօրէն, մի տեղ գրուատել ըստ արժանւոյն, մի այլ տեղ քննադատել ու հարւածել,—քննադատել նոյն իսկ ամենամօտ բարեկամներին, առանց անխորժ կիրք ու թշնամանք յարուցանելու, առանց վրդովելու բարեկամական յարաբերութիւնները: Նման քննադատութիւններ խմբագրութիւնն եւ յաճախ է ընդունում—երբեմն նոյն իսկ գիտակցելով նրանց սուբ'եկտիւ, անլուրջ, վայրիվերոյ բնոյթը—ընդունում է առանց վիրաւորուելու և գըժտուելու... Դա հասարակական և ընկերային էտիկայի այբբենն է և երբեք մոռանալու չէ փիլիսոփայի իմաստուն խօսքը. «Եթէ լսածդ քննադատութիւնը ճիշտ է և արուած է շիտակութեամբ,—ուղղւիր (corrige toi), իսկ եթէ վայրիվերոյ է, չարախնդիր ու աչառու,—խնդա՛ վրան (moque t'en!).

Անցեալ օր ծանօթներիցս մէկը կանգնեցրեց ինձ.—

— «Ինչ էք արել... Լէօն այլ եւս չի աշխատակցի ձեզ: Միևնոյն համարում, ուր տպուած է նրա մի մեծ յօդուածը, Բագւի Թղթակիցը փառաւորապէս [illegible] է Մելիքի Աղջիկը— դրաման... Վերջացաւ, Լէօն էլ չի գրի «Հորիզոն»-ին...

Տիպիկ բան է մեր բարքերի համար: Եթէ ուզէի պատասխանել, պէտք է ասէի.

—«Բարեկամ, նախ Բագւի Թղթակցի և նոյն իսկ մի քանի Թղթակիցների հարւածներով չէ, որ Մելիքի Աղջիկը կը տապալւի: Ապա, վերջապէս, Լէօն իր պատկառելի տեղն ունի հայ մտաւոր գործիչների ընտանիքում և դրամատուրգի դափնիները չեն, որ զարդարում են այդ տեղը... Փոքրիկ եսեր միայն կարող են վարւել այդպիսի հիւանդոտ բծախնդրութեամբ, գժտւել թերթի հետ մի յօդւածի, մի աննպաստ ակնարկի պատճառով, կամ թէ կապւել, բարեկամանալ թերթի հետ՝ բացառապէս վերջինի կողմից իրենց հասցէին ուղղւած որև է անոյշ խօսքի շնորհիւ... Սա այբբեն է, բարեկամ»:

Մի այլ անգամ մեր ծանօթ երիտասարդ կրիտիկոսներից մէկը գրում է բարեկամիս, որ պատրաստած է և կուզէր զրկել Հորիզոնին քննադատական մի էտիւդ մեր հին ու անւանի գրող Վ. Փափազեանի երկերի մասին, բայց ցաւով պէտք է հրաժարւի այդ մտքից, քանի որ նոր խմբագրութիւնը մտցրել է Վ. Փ..-ին իր մօտիկ աշխատակիցների ցանկը և ուրեմն չի ուզի տպել մի այդպիսի քննադատական, որի մէջ կան դառն խօսքեր Վ. Փ.-ի հասցէին: Պատասխանեցինք, ի հարկէ, պ. քննադատին, որ զուր տեղն է անում նւաստացուցիչ ենթադրութիւններ խմբագրութեան պարտագիտակցութեան մասին, էտիւդն ստացանք և կը հրատարակենք յարմար առիթով:

* *

Դեռ չվերջացրինք: Ցաւոտ բաներ շատ կան ասելու: Դիւրին չէ եղել Հորիզոնի խմբագրող լինելը: Բաւական չէ, որ ամեն օր բազմաթիւ գժգոհներ ռմբակոծում են մեզ իրենց անողոք պահանջներով— բանաստեղծը պահանջում է ոտանաւորներին շատ տեղ տալ, վիպասանը՝ պատկերներին, գաւառի Թղթակիցը՝ գաւառական կեանքին, քաղաքինը՝ քաղաքային հարցերին, գիտնականը յորդորում է մշտական բաժին բանալ գիտութեան համար, գաղթականը պահանջում է լցնել թերթը գլխաւորապէս գաղթականութեան ցաւերի ու հոգսերի նկարագրութեամբ, մինը շեշտում է, որ մոռացւած է ռուսական կեանքը, միւսը հրահանգում է բաժին բանալ հայոց հարցի պատմութեան համար և այլն, և այլն—բաւական չէ, ասում եմ, որ «Հորիզոնի» ներկայ սահմանափակ էջերում, իւրաքանչիւրը լայն տեղ է պահանջում իր մասնաճիւղի կամ իր նախընտրած նիւթերի համար...

Մեզ դիմում են դեռ այլ պահանջներով ու... ամբաստանութիւններով: Մեզ ասում են, որ մենք իրօք ունինք տաբու*), նոյնիսկ մի շարք տաբուներ... Նախ հենց ինքը, Թիֆլիսի առաջնորդ Մեսրոպ սրբազանը՝ որ, ասում են, պատասխանատու քայլեր է անում առանց խորհրդակցելու... Տաբու է, ասում են, մեզ համար Կ. Հ. Բարեգործական ընկ. իր նախագահով. տաբու է Կենտրոնական Կոմիտէն, զուգէ և Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը, որի թուլութեամբ կամ մեղսակցութեամբ յարատեւում է—ի վնաս դպրոցի—մի անհանդուրժելի հակամարտութիւն՝ տեսչի և ամբողջ ուսուցչական կազմի միջև. տաբու է իբր թէ Ազգային Բիւրօն, այդ quasi-կուսակցական մարմինը, որ յիշեցնում է Երիմեանի հռչակաւոր «քառակուսի անիւը», բայց որ, դժբախտաբար, աւելի լաւով փոխարինելու հնար չկայ... Տաբու է մեզ համար—horrible dictu!—անգամ Տիգրան Նազարեանի «Հրատապ Սփոփանքը»...

*) Tabou. Հայերէն բառ չկայ: Նա թարգմանւում է վայրենիների աշխարհում մի սրբութիւն: Նրանք ունեն մի շարք տաբուներ, այսինքն այնպիսի նւիրական մեծութիւններ, որոնց հանդէպ ոչ միայն քննադատելը, այլ նոյնիսկ աչք բարձրացնելը համարւում է սրբապղծութիւն.

Անցեալ օր մի պարոն, ըստ երեւոյթին ինտելիգենտ, նախկին քարտուղար Կենտ. Կոմիտէի, բերել էր մեզ մի մեղադրական պ. Սամսոն Յարութիւնեանի դէմ և խնդրում էր տպագրել: Մեղադրողը ասում էր, ի միջի այլոց, որ Կենտր.-ի գործավարութեան սահմաններում տեղի են ունենում զանցառութիւններ ու զեղծումներ, որոնց մասին անփոյթ ու անտեղեակ է մնում ինքը նախագահը, պ. Ս. Յարութիւնեանը: Պատասխանեցինք, որ անկարող ենք տպագրել, որ խնդիրը կարօտ է ստուգութեան, եւ առաւել, որ ինքը մեղադրողը, որպէս հեռացւած քարտուղար, ի վիճակի չէ [illegible] ձեւով ներկայացնելու գործի էութիւնը: Պարոնը ելաւ, թոյն ու շանթ արձակելով և, ի հարկէ, մտքում ասելով. «Խնամիութիւն է, Ս. Յարութիւնեանին չի ուզում դիպչել»... Երկու օր յետոյ մարդը հանդիպում է ինձ փողոցում և գրիմասով շուռ տալիս երեսը. արդէն «գժտւել է»...

Այլ միջադէպ՝ աւելի պիկանտ և աւելի բնորոշ մեր բարքերի համար: Մի քանի օր առաջ բերում են մեզ մի հաւաքական բողոքագիր ութից—տասը ստորագրութեամբ, պ. Տիգրան Նազարեանի դէմ (վերջերս բաւական յաճախ են տեղում այդ բողոքները ընդդէմ պ. Նազարեանի և նրա ձեռնարկի. տարաբախտաբար, մենք ի վիճակի չենք ճշմարտութիւնն ստուգելու): Մի շարք ծանր մեղադրանքներ էին ուղղւում «Հրատապ Սփոփանք»-ի դէմ, բայց բողոքագիրը բաւականաչափ հիմնաւորւած չէր, ուստի մերժեցի: Ապարդիւն բան է. տըպում էք բողոքը և խեղճ մեղադրըւողը գալիս է նոյնքան կատեգորիկ հերքումներով... Վատնւում են միայն թուղթն ու մելանը և թերթի սուղ էջերը այս ծանր ժամանակում զբաղւում են անախորժ ու անօգուտ բանակռւով: Գիտէք ինչ ասաց ինձ այդ մերժումի վրայ՝ բողոքարկուների շէֆը.

— «Ես արդէն կը սպասէի... Դուք ալ Նազարեանի գործակից ու մեղսակից էք. այդ պատճառով չէք ուզեր տպել»:

Շեշտակի նայեցի մարդուն. դէմքի արտայայտութիւնը շատ էր վճռական. ըստ երեւոյթին, համոզւած էր իմ «գործակցութեան» մէջ Հրատապ Սփոփանք-ում, ուստի քաղցրութեամբ խորհուրդ տւի, որ չկորցնի իր ժամանակը մեր խմբագրատանում:

Ես բնաւ չեմ մեղադրում այդ խեղճ ու կիսագրագէտ հայրենակիցներին: Նրանք կարդում են հայ մամուլի որոշ օրգանները, ուր սովորութիւն է դարձել՝ չսիրած մարդուն չարաբանելն ու մրոտելը: Մի ամիս առաջ բարեկամներիցս մէկը, Բագւում, ցաւակցութիւն յայտնելով, ուղարկեց ինձ «Մշակ» լրագրի մի համարը, ուր գրուած էր իմ մասին, թէ «ազգային դրամներ եմ ուտում» և թէ «փափախաւորների մեծաւորն եմ»: Երկու ֆրազ—երկու ոճիր: Առաջինը՝ անտաշ և անվտանգ, երկրորդը՝ ժանիքաւոր և թունոտ: Երկրորդ կարգի ոճիրների մէջ առանձնապէս մարզւել է այդ զարմանալի թերթի խմբագիրը...

— Վա՜յ քեզ, ասաց բարեկամս կիսալուրջ տոնով, այսուհետև քեզ եւս հանգիստ չի տայ այդ մարդը... Եւ դու դեռ տարւած ես ինչոր միամիտ ու վնասակար մտքերով, կուզես աւելի ուժեղ տեսնել հակառակորդ կուսակցութիւնը և այդ թերթի գոյութիւնն էլ համարում ես անհրաժեշտ:

— Այո, դարձեալ անհրաժեշտ, իմ սիրելի բարեկամ... Որովհետեւ մեզ համար տաբու չէ և այն կուսակցութիւնը, որ տիրում է հրապարակին և որ քառորդ դարուց ի վեր տոն է տալիս հայ շարժման ու հայ կեանքի առաջադիմական երեւոյթներին: Անհրաժեշտ է, անտարակոյս, նրա մտաւոր ու բարոյական դրամագլուխը, բայց այդ դեռ չի նշանակում, թէ նա ունի մենաշնորհը ճշմարտութեան և լաւագոյն գործելակերպի: Անհրաժեշտ են և ուրիշ ուժեր, հակառակորդ կուսակցութիւններ ու խմբումներ, թէկուզ ողբալի մտաւորով ու բարոյականով: Անհրաժեշտ է ուժերի բախում, մըշտնջենաւոր և փոխադարձ քննադատութիւն ու հսկողութիւն... Մեր ինտելիգենցիայի լայն խաւերի մէջ ընդունւած է արհամարհել «Մշակ» թերթի կողմից եկող ամեն մի քննադատութիւն ու յարձակում: Սխալ տակտիկ: Քրէական ամենածանր յանցաւորներն անգամ կարող են երբեմնապէս շիտակ խօսել, արդարութեամբ մտածել: Մեղաւորը, ի հարկէ, դարձեալ ինքը այդ թերթն է. Նա այնքան է վարկաբեկել ինքզինքը, որ մարդիկ բանի տեղ չեն դնում անգամ արդար գիտակցութեան այն հազւադէպ կայծերը, որ ցայտում են նրա էջերից: Նա այնքան է համեմել իր քննադատութիւնները չարախօս զըրպարտութիւններով ու յանցաւոր [illegible], որ նրա կողմից տեղացող ամեն մի հարւած—անգամ արդար ու տեղին—վիժել է միշտ և անէացել տարածութեան մէջ: Եւ շիտակ, ազնիւ քննադատութեան բացակայութիւնը անդրադարձել է բնականաբար, նաև իշխող կուսակցութեան կեանքի ու աշխատանքի վրայ,—անդրադարձել է, ոչ ի հարկէ, դրական մտքով... Այո, բարեկամս, ես կուզէի, որ ունենայինք աւելի ուժեղ հակառակորդ—թէ թուով թէ որակով—որպէս զի մենք էլ լինէինք աւելի ուժեղ...

* *

Ահաւասիկ մեր բարքերը: Դեռ լի ժանգով ու ասիական գռեհկութեամբ: Դեռ ախտաւոր և հրոդ: Այնքան հրոդ՝ որ կուզէք նորէն փախչել հազարաւոր մըղոններ հեռու հայրենի հորիզոններից: Մարդիկ պէտք են, որ դիմանան այդ պղտոր բարքերի յորձանքին և հոգեկան պայծառութեամբ շարունակեն առաջ տանել հայ ժողովրդի վերանորոգման գործը: Մարդիկ պէտք են, որ մաքրեն հրապարակը հանդէպ այն նոր արշալոյսների, որ այսօր լուսաւորում են մեր բազմատանջ հայրենիքը...

Մհ. Վարդանեան

...նելու և սատարելու հայրենի ...րարութիւնն ու Թռչնաբու... ...նը և հնարաւորութեան սահ... ...ամենալայն կերպով օգտա... ...ու Կասպից ծովի շրջանի ձկան ...անքից։ Որոշուած է դիմել նա... ...ամէն գեմստուօներին, որպէսզի ...տուն գներ մշակեն տաւարի և ...մար և մօտաւորապէս մասնա... ...տարիքաւոր անասուն կեն... ...րի քանակը, որ կարող է վերց... ...րերի նահանգներից, ուր չկայ ...։ Խորհրդակցութիւնն ապա ...գեմստուօներին և նրանց փո... ...ող օրգաններին բացատել իրա... ...ալ արգելելու, կանոնաւորե... ...լու արելու նահանգների սահմա... ...ւալի և ձսի արտահանութիւ...

...ՐՏԱՍԱՀՄԱՆ

...Զ, 7 փետր.—Սերեւոյեան ժա... ...լորդ Բրայսը և բրիտանա... ...միջպարլամենտեան պատւիրա... ...ն անդամները։

...ԽԱՐԵՍՏ, 7 փետր.— Ֆիլիպ... ...ն հրաժեշտի ունկնդրութեան ...ւեց Թագաւորի մօտ և երեկո... ...Ռուսեյից Պետրոգրադ։

...ԴՈՆ, 8 փետր.— Կառավարու... ...հաղորդւում է, որ պարլամենտ... ...իլ մի օրինագիծ 420 միլիոն ...տերլինգ պատերազմական ...արկ յատկացնելու մասին։ Նախա... ...ւէս յատկացուած ֆունտ ստերլինգնե... ...ի հետ, զինուորական վարկերի ընդհա... ...ուր գումարը կը կազմէ 1,720,000,000 ...ունտ ստերլինգ։

ՀՌՈՄ, 8 փետր.—Մամուլն ու հա... ...արակական կարծիքը վրդովմունք են ...յտնում, Իտալիային և նրա Թագա... ...որին վիրաւորական այն ճառի հա... ...մար, որ յունական պարլամենտում ...արտասանել է պատգամաւոր Սոկրա... ...ի կողմից՝ Կորֆու կղզու վրայ 50 ...տալական հրացանակիրների զետեղ... ...ի առթիւ։ Մամուլը հաւանութիւն է ...յտնում Սոննինոի յունական կառա... ...վարութեան արած հանդուռն բողոքին ...։ սպասում է միջադէպի լուծման։

ԼՈՆԴՈՆ, 8 փետր.—Դրօշի տակ են ...անչուած բոլոր 19 տարեկան ամուրի ...տղամարդիկ։

ԼՈՆԴՈՆ, 8 փետր.—«Դէյլի-Կրօնիկլ» ...գիտում է ռուս ժուռնալիստների ...յցելութեան։ Նրա առելով, մարդկու... ...թեան ապագայ խաղաղ բարեկեցու... ...թիւնը մեծ մասամբ կախում կունե... ...յ՝ անգլիերէն խօսող ռուս ժողո... ...անց մասնակցելուց ընդհանուր աշ... ...խատանքին։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

...ԼՐԱՏՈՒ

ԹԻՖԼԻՍ

Թիֆլիսի Հայոց Գիւղատնտեսական ընկերութիւնը, իր Ալաշկերտի հրահանգիչ Աբոյեանից, փետրուարի 8-ին ստացել է հետեւեալ հեռագիրը։

«Երեկ եկան մօտ 300 փախստական գաղթականներ. այսօր բոլորին տեղաւորեցի շրջակայ գիւղերում։ Սպասում եմ ուրիշ շատ խմբերի գալստեան։ Մուշի շրջանից շուտով տեղս կը հասնեն 70 կանայք և երեխաներ. այստեղ նրանց կերակրելու հնարաւորութիւն չկայ. եթէ ուզում էք փրկել նրանց, շտապեցէք օգնութեան հասնել. գործերը այստեղ չափազանց շատ են և ես մինակ անկարող եմ հոգալ ամենքի մասին. ուղարկեցէք օգնականներ»։

◆ Վեհափառ Կաթողիկոսը կարգադրել է թեմական առաջնորդներին, որ սուր վարակիչ հիւանդութիւնների տարածման դէմ առնելու համար, սրանից յետոյ վարակիչ հիւանդութիւնով մեռածների դիակները չտարուեն եկեղեցի, այլ ուղղակի տարուեն գերեզմանատուն և թաղուեն. արգելւում է նոյնպէս այն աւանդական սովորութիւնները, որով մեռելները թաղելու համար փոխադրւում են գիւղեր և քաղաքներ կամ մէկ տեղից միւսը։

◆ Սրանից մի քանի օր առաջ Հայ Օրիորդաց կոմիտէն հեռագրով դիմել էր Լոնդոն, Հայ Փախստականներին Օգնող կոմիտէի նախագահուհի օր. Ռոբինսոնին և խնդրել, որ իր որբանոցի օգտին մի որոշ գումար յատկացնի։ Օր. Ռոբինսոնը, յարգելով Հայ Օրիորդաց կոմիտէի խնդիրը, անգլիական հիւպատոսի միջոցով փոխադրել է 8,000 ռ.։

◆ Թիֆլիսի Հայ Ուսուցչական կոմիտէն, որ Կովկասի Հայ Ուսուցչական Միութեան նախաձեռնութեամբ կազմակերպուած գործում է պատերազմի առաջին տարուց յանուն փախստական երեխաների ուսումնական-դըպրոցական կարիքները հոգալու՝ այժմ Թիֆլիսում Ցոֆեանեան և Ներսիսեան դպրոցի հին շէնքում ունի ութ բաժանմունք։ Իւրաքանչիւր բաժանմունքում սովորում են միջին թւով 55 փախստական աշակերտ-աշակերտուհի։ Ութ բաժանմունքում աշակերտում են 440 հոգի։ Այդ աշակերտութեան կէսը ճաշ է ստանում ամեն օր Թիֆլիսի Կանանց կոմիտէի բացած ճաշարանում, որ գտնւում է Գայիանեան դպրոցում։

◆ Քաղաքային վարչութեան անդամ Զարարի պաշտօնավարութեան ժամանակամիջոցը լրացած լինելով, պիտի ընտրուէր նոր անդամ, բայց որովհետև քաղաքային ընտրութիւններ են լինելու, այդ ընտրութիւնը թողնուած է դումայի նոր կազմին։

◆ Թիֆլիսի Հայոց Գիւղատնտեսական Ընկերութիւնը մի հեռագիր է ստացել Պետրոգրադի հայոց եկեղեցիների նախագահ Բուդաղեանից, որ վերոյիշեալ խորհուրդը յատկացրել է 5,000 ռ. յօգուտ ընկերութեան 1916 թ. ծախսերի համար։

◆ Վերջին մի քանի օրում Սարիղամիշից, Կարսից և Բէկլի-Ահմեդից Համառուսական և Կովկասեան № № 1, 5, 8, 9, 10, 208, 209, 211 և 223 գնացքներով Թիֆլիս բերեցին մեծ թւով վիրաւոր և հիւանդ զինուորներ, որոնց թւում կային 54 վիրաւոր և 26 հիւանդ սպաներ և 245 ցրտահար զինուորներ։ Բոլոր ծանր հիւանդ և վիրաւոր զինուորները զետեղուած են Նաւթլուղի զինուորական հիւանդանոցում, իսկ ցրտահարները փոխադրուած են զանազան քաղաքներ։

◆ Այսօր, փետրուարի 10-ին լրացած լինելով ռուս յայտնի դերասանուհի Վ. Ֆ. Կոմմիսսարժեւսկայայի մահւան վեց ամեակը, Թիֆլիսի բարձրագոյն կանանց դասընթացքների ուսանողուհիները նոյն դպրոցի շէնքում տալիս են երեկոյթ նուիրուած տաղանդաւոր դերասանուհուն։ Ամբողջ մուտքի 10°/₀ յատկացւում է Կոմմիսսարժեւսկայայի անուան-սանատորիային, իսկ մնացեալը՝ բարձրագոյն դասընթացքների ուսանողուհիների փոխադարձ օգնութեան դրամարկղին։

◆ Հայոց Կենտրոնական կոմիտէի Նպաստաբաշխ Ցանձնաժողովի միջոցով 1916 թւի յունուարի 30-ից մինչև փետրուարի 5-ը որպէս նպաստ յատկացրել է 504 ընտանիքի (2,994 անձ) 2,096 ռուբլի 90 կոպէկ, 355 որբերի 372 ռուբլի 95 կոպէկ և 179 մըշեցի և սասունցի գաղթականներին՝ 250 ռուբլի 60 կոպէկ։

◆ Ապրիլին, Թիֆլիսում բացւում է Պետրոգրադի միջազգային վաճառականական բանկի բաժանմունք. բանկի կառավարչի պաշտօնի համար հրաւիրւում է Ալեքսանդրապոլի նախկին քաղաքագլուխ Կ. Մ. Պետրոսեան։

◆ Վերջին օրերը Թիֆլիսի քաղաքային հիւանդանոցներին են մտել հետեւեալ հիւանդ և վիրաւոր հայ սպաները. Ց. Ս. Մելիք - Մարտիրոսեան, Ս. Փ. Տէր - Մարտիրոսեան, Վ. Ն. Վարդապետեան, Ս. Գ. Տէր - Պետրոսեան։

◆ Վաղը, փետրուարի 11-ին, Հայոց Դրամատիքական ընկերակցութիւնը, Թիֆլիսի ժողովարանում, տիկ. Ցասմիկի և Գ. Միրզաեանի մասնակցութեամբ կը ներկայացնէ Գ. Սունդուկեանի «Պէպօ» և Ց. Պարոնեանի «Մեծապատիւ Մուրացկանները»։ Տեղերի գները 3 ռ. մինչև 75 կոպ.։

◆ Այս շաբթուն, Հասարակական ակումբի նախաձեռնութեամբ կազմակերպուած սովորական շաբաթ օրւայ երեկոյթից զատ, կիրակի, փետրուարի 14-ին, կանանց բարձրագոյն դասընթացքների շէնքում, կը կայանայ գրական-երաժշտական երեկոյթ նուիրուած Չայկովսկու յիշատակին։ Երեկոյթին մասնակցում են Կայսերական թատրոնների նախկին երգիչ Բ. Բ. Ամիրջանը, Տէր-Գրիգորեանը և ուրիշ շատ սիրողներ։

◆ Կիրակի, փետրուարի 7-ին, Թիֆլիսի դատաստանական պալատի քրէական սեսսիան մեկնեց Գանձակ. սեսսիայի նիստերը նշանակուած են փետրուարի 8-ից մինչև 16-ը։

◆ Նոյն օրը, Թիֆլիսի դատաստանական պալատի 1-ին քրէական բաժանմունքի սեսսիան մեկնեց Գորի. սեսսիայի նիստերը նշանակուած են փետրուարի 8-ից մինչև 14-ը։

◆ Ստացանք Մոսկւայից 1) Армянскій Сборникъ ը. հրատարակութիւնը 2) Армянскій Вѣстникъ-ի առաջին համարը։

◆ Փետրուարի 9-ին Թիֆլիսի բարակներն են մտել սկարլատինայով— 5, դիֆտերիտով—2, բծաւոր տիֆով— 1։ Առողջացել են՝ սկարլատինայով— 4, դիֆտերիտով—2, բծաւոր տիֆով— 1։ Մեռել է սկարլատինայից 1։ Մընում են հիւանդներ՝ սկարլատինայով —162, դիֆտերիտով—25, ծաղիկով— 1, բծաւոր տիֆով—30, որովայնային տիֆով—12, զիգնատերիայով—1, կարմիր քամիով—1, միզրենով—3։

◆ Փետրուարի 8-ին Թիֆլիս է ներմուծել՝ ալիւր—20 վ., գարի—1 վ., վառելափայտ—16 վ., քարածուխ—4 վ., գրելու թուղթ—1 վ., գինի—3 վ., ալիւրի թեփ—1 վ.։

ԿՈՎԿԱՍ

Էրզրումի գրաւման առթիւ, Բագւում, ուղղափառների տաճարի հրապարակում, մեծ բազմութեան ներկայութեամբ տեղի է ունեցել գոհաբանական մաղթանք, որին մասնակցել են հայ, հրէայ և մուսուլման հոգեւորականութիւնը։ Ինչպէս Թիֆլիսում, նոյնպէս և Բագւում բոլոր դըպրոցների աշակերտները երեք օրով արձակուրդ են ստացել։

◆ Բագւի գաղթականներին օգնող հայ կոմիտէն 500 ռ. է ստացել Ի. Լ. Մայիլովից, վերջինիս քրոջ թաղման օրը գաղթականներին ճաշ տալու համար։

◆ Վլադիկաւկազի երկաթուղու գծի վրայ, «Ինոզեմցևօ» կայարանի մօտ № 29 մարդատար գնացքը անյայտ պատճառներից գծից դուրս է եկել. մարդկային զոհեր չկան։

ԴՊՐՈՑԱԿԱՆ

ՄԵՐ ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԸ

II

Ինչ միջոցներով են պահպանւում մեր ծխական դպրոցները։ Մեր դպրոցները պահպանւում են եկեղեցական-վանական ու համայնական կալուածների, հողերի արդիւնքով, եկեղեցու և ուխտատեղիների տուած օժանդակութեամբ, ծխական տուրքով, աշակերտական թոշակներով, Բարեգործական ընկերութիւնների և մասնաւոր անհատների նպաստներով և պատահական եկամուտներով։

Սոյն 1914—1915 ուս. տարում Երեւանի թեմի 190 դպրոցները կառավարւել են հետեւեալ եկամուտներով.

I Աշակերտական թոշակներից 56,531 ռուբլի։

II Անշարժ կալուածներից (գիւղի կամ եկեղեցու) 43,335 ռ.։

III Ծխական տուրքից 26,846 ռ.։

IV Եկեղեցիներից և ուխտատեղիներից 22,059 ռ.։

V Բարեգործ. ընկերութիւններից և ֆոնդից 17,570 ռ.։

VI Մասնաւոր անհատներից և հիմնարկութիւններից 20,688 ռ.։

VII Պատահական եկամուտներից 21,520 ռ.։ Ընդամենը 208,549 ռ.։

Թեմի 190 դպրոցների վրայ ծախսուած է 224,103 ռուբ., ուրեմն պաց է մնում 15,554 ռ., որը ընկնելու է պատահական եկամուտների շարքը, այնպէս որ վերջինս պէտք է հաշւել ոչ թէ 21,520 ռ., այլ 37,074 ռ.։

Սրանց մէջ ամենավստահելի աղբիւրները պէտք է համարել կալուածների (գիւղի կամ եկեղեցու) եկամուտները, ծխական տուրքը և դրսից եկած նպաստները, որոնք թէպէտ ժամանակաւոր են, բայց աներկրայելի են։ Այս երեք աղբիւրներից սոյն ուսում. տարում մեր դպրոցները ստացել են 87,751 ռուբ., այսինքն՝ ողջ բիւջէի (224,103 ռ.) մօտաւորապէս 40°/₀-ը։ Մնացած եկամուտները մենք հաստատուն չենք կարող համարել։ Եկեղեցիներից ու ուխտատեղիներից ստացուած օժանդակութեան գումարը տատանւում է և շատ անգամ կախուած է այս կամ այն քահանայի, երեցփոխի կամեցողութիւնից։ Եկեղեցին պէտք է օգնութեան հասնէ դըպրոցին միայն այն ժամանակ, երբ կը հոգայ իր կարիքները։

Մեր եկեղեցիները մեծ մասամբ խիստ անշուք են և շատերը կարիք ունեն վերանորոգութեան, այնպէս որ երեցփոխը եթէ չուզենայ դպրոցին նպաստել, միշտ էլ կարող է առարկութիւններ գտնել։ Մեր եկեղեցական կանոններով երեցփոխը համարւում է հոգաբարձութեան անդամ և ուրեմն իրաւունք չունի իր կամքով կարգադրել եկեղեցական գումարների գործը, բայց իրականութեան մէջ՝ մանաւանդ գիւղական կեանքում, յաճախ հակառակն է կատարւում. երեցփոխը ինքն անձամբ է վարում գործերը և վճիռներ կայացնում։

Աշակերտական թոշակը նոյնպէս հաստատուն աղբիւր չէ. նա շարունակ փոփոխւում է։ Այս տարի բերքը լաւ է և հոգաբարձուները կարող են իւրաքանչիւր սանից գիցուք 3 ռ. թոշակ պահանջել. միւս տարին կարող է անբերրի լինել և թոշակի քանակը կընկնի կամ սաների զգալի մասը չի վճարի սահմանուած թոշակը։ Բացի այդ՝ թոշակի բաշխման շուրջը միշտ էլ տեղի են ունենում անվերջ դժգոհութիւններ, տարաձայնութիւններ։ Մեր ժողովուրդը շատ տեղերում չի կարող հաշտուել այն մտքի հետ, որ թոշակը նշանակւի ըստ կարողութեան. թէօրիայով ընդունում են, որ դա է արդար ձեւը, բայց իրագործման դէպքում չեն կարող համաձայնութեան գալ։ Այսպիսի դժգոհութիւններից խուսափելու համար հոգաբարձուները թոշակը սաների վրայ բաժանում են հաւասար չափով։

Այս դէպքում էլ տուժում են չքաւորները. նրանք ստիպուած են լինում կամ երեխաներին դպրոց չուղարկել, կամ երկուսի, երեքի փոխարէն միայն մէկին ուսում տալ։ Թոշակի խնդիրը նոյն իսկ արդար բաժանման ձեւով շարունակ տեղիք է տալիս անվերջ տրտունջների։ Ամեն դպրոց ունի թոշակի շատ թէ քիչ չվճարուած մնացորդ։ Զարմանալին այն է, որ սովորաբար գիւղի ունեւորները չեն ուզում վճարել թոշակը և այսպիսով վատ օրինակ են տալիս նաև ճղճիմ ծնողներին։ Ցաճախ թոշակի պատճառով կամ սաներն են զրկւում ուսումից և կամ հոգաբարձուները սրա նրա հետ գէշ ու լաւ լինելուց յետոյ հեռանում ասպարէզից։ Շատ լաւ կը լինէր, եթէ մենք այնպէս ապահովէինք մեր դպրոցները, որ միանգամայն մէջտեղից վերանար թոշակի խնդիրը իր բազմատեսակ անյարմարութիւններով...

Մասնաւոր անհատների և գիւղական բանկերի ու այլ հիմնարկութիւնների տուած նպաստները նոյնպէս վստահելի աղբիւր չէ. այսպիսի նպաստները տարեցտարի փոփոխւում են և յաճախ տրւում են միայն մի տարով։

Այլ ևս աւելորդ է պատահական եկամուտների մասին. դրանք գոյանում են միանւագ հանգանակութիւնից, ներկայացումներից, աւետիս ժամ գալուց և այլն։ Ինքնին հասկանալի է, որ դրանց վրայ մեծ յոյսեր դնել չի կարելի։

Այս թւերից պարզ երեւում է, որ Երեւանի թեմի 190 դպրոցների բիւտջէի միայն 40°/₀-ը հաստատուն է, այն ինչ 60°/₀-ը բաղկացած է այնպիսի եկամուտներից, որոնք կարող են առաւել կամ նուազ չափերով տատանուել։ Իմ հաւաքած մասնաւոր տեղեկութիւններից պարզւում է, որ մեր միւս թեմերի ծխական դպրոցների եկամուտներն էլ մօտաւորապէս նոյն պատկերն են ներկայացնում։

Ահա սա է մեր ծխական դպրոցների ամենահիւանդոտ կողմը։ Եկամուտների այս անհաստատ ու երերուն վիճակն է, որ յաճախ մեր դպրոցները տապալւում են կամ կրճատում իրանց դասընթացները։

Նրանք, ովքեր սրտանց ցանկանում են հայ դպրոցը դնել բարւոք դրութեան մէջ, հենց այստեղից էլ պէտք է սկսեն իրենց գործը, այսինքն՝ գտնել աւելի հաստատուն ու վստահելի աղբիւրներ, որպէսզի մեր դպրոցները տնտեսական կողմից չենթարկեն դժբաղդ պատահարների։

Թ. Խզմալեան

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Բուխարեստից հեռագրում են, որ Եգիպտոսի արշաւանքի վերաբերմամբ թիւրքերի և գերմանացիների միջև ծագած տարաձայնութիւնները վերջացել է նրանով, որ թիւրքերը յետ են կանչել իրենց եգիպտական արշաւազօրքն և ուղարկում են դէպի Փոքր Ասիայի խորքը արշաւող ռուս բանակի դէմ։

— Զինուորական հեղինակաւոր անձեր գտնում են, որ Մուշից նահանջ տւող թիւրքերը չեն կարող միանալ Բիթլիսի շրջանում և Տիգրիսի հովիտում գործող թիւրքական ուժերի հետ։ Էրզրումից դէպի Տրապիզոն նահանջող զօրամասերը ձգտում են խանգարել ռուսների յառաջխաղացումը ծովեզերքին, իսկ ջարդուած բանակի մի զօրասիւն էլ նահանջ է տալիս դէպի Սըւազ։ Այս երկու ուղղութեամբ էլ ռուսները հետապնդում են թիւրքերին։ Միեւնոյն ժամանակ նկատւում է, որ Պարսկաս-

ԳՐԱԿԱՆ ՋՐՈՅՑՆԵՐ

VI

Հին աշխարհի վերջին այլանդակ ձեւերը քնելուց յետոյ, մարդկութիւնը մտնում էր մի նոր շրջանի մէջ։

Բրիտագոի ժողովի խորհրդակցութեան գլխաւոր նպատակը եղել էր՝ հասարակական կազմակերպութիւնը վերականգնել այն նոր սկզբունքներով, որոնք անհրաժեշտօրէն բղխում էին գիտութեան արագընթաց յառաջդիմութիւնից։ Վեհաժողովը հրաւիրուած էր՝ ուղղակի աշխարհը կործանումից փրկելու փութկոտութեամբ։ Նրան վիճակւեց գործ ունենալու այնպիսի աւերակների ու կործանման հետ, որոնց այլեւս անկարելի էր դարմանել։ Այդպիսի դրութիւնից միակ ելքն էր՝ կամ վերադարձնել մարդկութեանը դէպի եռ — հին բարբարոսական-երկրագործ ժամանակին, որից երկար դարերի աշխատանքով հազիւ ելել էին, և կամ նոր ընկերական կարգ ու կանոնին իբր հիմք ընդունել գիտութեան նորագոյն կարելագործութիւնները։

Ընտրութիւնը պարզ էր։ Անմիտ բան էր, գիտութեան եղած պաշարովը, մարդկային իմացականութեամբն ու ձգտումներովը, վերադառնալ հին կարգերին։ Հիւլէական ույժի գործածութիւնը մարդկութեան առաջ բաց էր անում ոչ միայն երկրի բոլոր անկիւնները, այլ նոյն իսկ նրա հեռաւոր խորքերը և մինչև աստղերը։ Մարդիկ երկիրը մշակելով, հասել էին նիւթական անհուն հարստութեան...

Ուրեմն, ոչ թէ դէպի ետ, այլ ընդհակառակն, դէպի առաջ և դեռ էլ աւելի առաջ։ Եւ այն՝ ոչ թէ անցեալ օրերի դանդաղութեամբ, այլ աւելի մեծ եռանդով և մեծ փութկոտութեամբ։

Սկիզբից իսկ նոր Կառավարութիւնը մեծահոգի վարմունք ցոյց տուաւ ամեն բանի վերաբերեալ։ Ուրիշ կերպ էլ չէր կարող լինել Համաշխարհային միակ Կառավարութիւնը։ Հենց որ հիւլէական խնդրաբխման ույժի բոլոր գործիքները և միջոցները իր կարգադրութեան տակ առաւ, անմիջապէս ընդհանուր զինաթափութիւն յայտարարեց և կատարեց զօրացրումը։ Այնուհետև պէտք եղաւ հոգալ ազատելու նոյն տարւայ ցանքսերը, կերակրելու դուրսը ձգուած մարդկանց, պատսպարելու նրանց և գործելու ընդունակներին գործ հայթայթել արդիւնագործական կենտրոններում։ Կանադա, Հարաւային Ամերիկա և Ասիական Ռուսաստանում կային դեռ ուտելիքի ահագին պաշարներ։ Օդային արագ հաղորդակցութիւնը՝ այդ հարստութիւնները սկսեց կանոնաւոր բաշխման ենթարկել...

Կեանքը հետզհետէ վերականգնւում էր ամեն տեղ՝ շնորհիւ արագ գործադրւող միջոցների և յուսալից հեռանկարի ազդած ոգևորութեան։

Կառավարութիւնը սկզբում մտածեց վերականգնել, — ժամանակաւորապէս լինէր—ընկերական ու տնտեսական այն կարգերը, որոնք գոյութիւն ունէին հիւլէական շարժիչները հնարելուց առաջ։ Ենթադրւում էր, որ մարդիկ վարժ էին առ այժմ այդ ձևերին միայն. դուցէ դժուար լինէր փոխել։ Սակայն պարզուեց ընդհակառակն, որ անհնար էր պահպանել նախկին սիստեմը։ Ոսկու և էժանագին էներգիայի առատութիւնից՝ դրամագլխային սիստեմը սնանկութեան էր հասել։ Վերականգնելու վերջին փորձին իսկ նա քայքայւեց բոլորովին ու ոչնչացաւ։ Մինչև պատերազմները՝ աշխատաւոր դասակարգի կէսից աւելին զրկւում էր առանց աշխատանքի։ Նախկին վարձատրութեան ձեւը այժմ աւելի եւս անյաջողութեան հանդիպեց, որովհետև քայքայուած էր դրամական սիստեմը անգամ։

Վեհաժողովը սկսեց տնտեսական ու ընկերական կեանքի կատարեալ փոփոխութեան ուղին և առ հասարակ ստիպուած եղաւ ամբողջովին թեւակոխել ընկերական կազմի բարեփոխութեան շրջանը...

Ուէլսը այստեղ բաւական մանրամասնօրէն նկարագրում է այդպիսի բարեշրջութեան և կատարեալ փոփոխութեան ընթացքը։ Կենտրոնական Կառավարութիւնը իր իրաւասութեան տակն էր առել ոչ միայն միլիոնաւոր աշխատող ձեռքերը, այլև այն էներգիան ու մեքենաները, որոնք ընդունակ էին հարիւրապատկելու գործունէութեան եռանդը և այդպիսով արագօրէն վերականգնելու ամեն շարժում։ Ունենալով այդ ամենը, Կառավարութիւնը մշակեց խելոյն «ժամանակաւոր մի սիստեմ», համաշխարհային երկրագործութեան համար։ Այդ սիստեմի էական կէտը այն էր, որ անհատական երկրագործութիւնը, և առհասարակ գիւղական կեանքը, պէտք է փոխարինուէր երկրագործական համագործակցութեամբ։ Համագործակցութիւնները պարզապէս ընկերակցութիւններ էին, որոնք իրենց վրայ էին վերցնում որոշ տարածութեան վարելահողեր ու պարտաւորւում էին որոշ չափով արտադրութիւն յանձնել Կառավարութեան...

Կամաց-կամաց վերանում էին այդպիսով՝ անհատական - խրճիթային կեանքը, ինչպէս և անհատական մանրիկ հակառակութիւնները, հաշիւներն ու վէճերը։

Եւ մինչ գիւղական կեանքն այդ կերպով էր բարեփոխւում, կառավարութեան ջանքերովը բոլոր ապաստան-շէնքերը վերածւում էին նոր տիպի քաղաքների. մեծ, օդասուն, լայնարձակ ու մաքուր կենտրոնների...

Մի տարի չանցած՝ ստեղծւում էր համաշխարհային յարաբերութեան համար ազատ մի լեզու՝ էս, թողնելով ամեն ազգի՝ իր լեզուն զարգացնելու որքան կարող էր։ Այնուհետև ընդունւում էր չափերի, ժամերի և հաշիւների միօրինակութիւն, իսկ ոսկի դրամը կորցնելով իր արժէքը, դրամական սիստեմը վերածւում էր պայմանական նշանների։

Այդպէս էր, որ ըստ Ուէլսի վէպի, աշխարհը հետզհետէ փարատւում էր գերազանցօրէն, ամեն հակամարտութիւն ու թշնամութիւն կորցնում էր իր նշանակութիւնը և մարդիկ մտնում էին այն շրջանը, որին դարերի ընթացքում այնքան երազել էին լաւագոյն մտքերը։ Ձգտել էին բոլոր ընկճուածներն ու հարստահարուածները։

Այժմ քիչ-քիչ վերանում էր ամեն ճնշում, շահագործութիւն, զրկանք ու տանջանք, հարստութեան կուտակումն ու թշուառութեան բազմապատկումն։ Այժմ մարդիկ ապրում էին այն երջանիկ օրերը, որ 20-րդ դարի սկզբների համար հեռաւոր երազներ էին միայն և չափազանց հրաշալի արշալոյսներ...

Եւ յիրաւի, չէ՞ որ այլևս «Աշխարհը հասնում էր իր կատարելութեան ճանապարհին։ Մարդ-պատերազմիկը, մարդ-փաստաբանը և կեանքի միւս բոլոր ձեւերը, որոնց նպատակն ու գործը միմիայն վէճերն էին ու կռիւները—հետզհետէ ոչնչանում էին ու ուսանդութեան կարգը անցնում։ Դրանց փոխարինում էին այլև խորհող մարդը, գիտնականը, մարդ-արուեստագէտ ստեղծագործողը»...

Եւ Ուէլսը իր ընդարձակ վէպի վերջին մասում թովիչ գոյներով նկարագրում է այդ օրերի մարդկութիւնը, նրա կեանքը, նրա մեծ ձգտումներն ու սլացումները։ Այո, նմուշներ է բերում մեծ ստեղծագործողների, մտածողների և արուեստագէտ ույժերի, անձնուրաց գիտնականների։ Պատկերացնում է այն մեծ Արշալոյսը, «երբ մարդիկ աւելի ու աւելի ընդունակ կը դառնան արտայայտելու այն ամենը, ինչ որ սովորում են ու մթերում ապագայի համար։ Մարդկային ցեղը և ցեղային իմաստութիւնն ու գիտութիւնը անխոնջ ու անընդհատ կամբարեն իրենց ույժերը, որպէս զի անհատական էներգիան տանեն ու միացնեն ընդհանուր վերջնական նպատակին»...

— «Մենք թէև դեռ մեր ոտքերովը կոխում ենք մեզ ստեղծող հողին, սակայն օդը այլևս չի պարփակում մեզ՝ բանտի պատերի պէս... Շուտով, շատ շուտով մարդիկ այլևս չեն բաւականանայ այս երկրագնդով։ Մեր ոգին կըձգտի աւելի բարձր»։

Այդպէս է խօսում վէպի վերջին մասի կենտրոնը կազմող հերոսը, Մարկ Կարենին, որ հետևեալ օրը մեռնելու էր վիրաբուժական դանակի տակ։ Մի նշանաւոր երազող, խոհեր ներկայացնող այն երազատեսներից, որոնք ապրում են գաղափարների մեծ լոյսովը միայն և մեռնում են՝ վառ արշալոյսների օրինեքը բերնին։

... «Եւ դու—ասում է Կարենինը մեռնելուց առաջ—դու, Արեգակ, որ վերջին անգամը քո հրաշէկ սուրով այրում ես Մարկ Կարենինի աչքերը, զգուշացիր մարդուց։ Դու կարծում ես թէ մեռնում եմ ես։ Ոչ, ես միմիայն հանում և դէն եմ ձգում իմ պատանեկներից մէկը՝ քեզ աւելի մօտ գալու համար... Իմ առաջին քայլը դէպի լուսինը կը լինի, իսկ յետոյ, շատ շուտով, կը յարձակւեմ և քեզ վրայ»...

Վէպի վերջին այս մասը շեղ ստամանների և խղճալների, վառ անուրջների և ձգտումների մի ոգևորուած ներբող է առ հասարակ, որ արժէ երեք առ երեք կարդալ։ Ով գիտէ ռուսերէն, թող անպայման ձեռք բերէ այդ գեղեցիկ աշխատութիւնը։ Ցոյսի և մխիթարութեան քաջալերիչ մի երգ է այն՝ արցունքի, արիւնի և աւերումի այս ծանր օրերին. վսեմ անուրջների և յուսալից արշալոյսների դրւագ, որ մի քանի ժամեր համար գոնէ՝ մոռացնել է տալիս մեր կրծքի վրայ ծանրացող մղձաւանջի սոսկումները...

Վ. Փափազեան

*) Տես «Հորիզոն», № 29.

տանում գործող Թիւրքական ույժերի մէջ և իրարանցում է ընկել։

— „Нов. Вр.“-ն մատնանշում է, որ ռուսաց Կովկասեան բանակի աջ թեր, նաւատորմիղի աջակցութեամբ, առաջ է շարժւում Վիցէ-սուի վրայով, իսկ ձախ թեր գործում է զարմանալի արագութեամբ։ Դիարբեքիրից շատ մօտիկ է Բաղդադի երկաթուղին, որը Միջագետքում գործող Թիւրքական բանակի միակ կենսական երակն է։

— «Рѣчь»-ը Էրզրումի գրաւման առթիւ առաջ է բերում յայտնի Ռոհրբախի կարծիքը, որը Ռուսաստանի տիրապետութիւնը Հայաստանի վրայ՝ համարում է Թիւրքիայի ինքնութեան վախճան և Գերմանիայի համար կործանարար։

— Ստացւած տեղեկութիւնների համաձայն, Էրզրումի բերդապետը վերջին ժամանակս Ահմէդ-Ֆեզի-փաշան էր, նախկին հրամանատարը 9-րդ կորպուսի, որը խաղաղ ժամանակ գտնւում էր Էրզրումում։ Սարիղամիշի տակ այդ կորպուսի կրած ջարդից քիչ առաջ Ահմէդ-Ֆեզի-փաշային փոխարինել էր Իսհան-փաշան, որը գերի ընկաւ ռուսների ձեռքը։ Այնուհետև Էրզրումի բերդապետ էր նշանակւած գերմանացի Պոսէլ-փաշան, որին վերջերս փոխարինել էր նորից Ահմէդ-Ֆեզի-փաշան։

— Պոլսից ստացւած տեղեկութիւնների համաձայն, երիտասարդ Թիւրքերի կոմիտէն վճռել է փոխել Թիւրքաց գահաժառանգին և գահաժառանգ հռչակել գերմանոֆիլ պրինց Մեջիդին։

— Մայրաքաղաքի թերթերի տեղով, զինւորական հեղինակաւոր շրջաններում չեշտում են, որ Էրզրումից տանող ճանապարհները կանոնաւոր են, ուստի կարելի չէ սպասել, որ նահանջ տւող թշնամին արագօրէն ոչնչացւի։

— Աթէնքում լուրեր են շրջում, որ Պոլսում և Թրակիայի ու Զմիւռնիայի զօրքերի մէջ խոշոր անկարգութիւններ են տեղի ունենում։

— Գերմանիան առանձին ուշադրութիւն է դարձրել բուլգարական պաշտօնաթերթի մի յօդւածի վրայ, որի մէջ ապացուցւում է, որ Բուլգարիան ինքնապաշտպանութեան համար իրաւունք ունի ռազմական գործողութիւնները փոխադրելու Ռումինիա, որպէսզի ոչնչացնի այնտեղ մտած թշնամիներին։

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Ստացել ենք.

Սուխումից Յակոբ Զօրպաճեանի երեխայի կնունքի ժամանակ, Տիգրան Վարդանեանի ձեռքով հաւաքած 16 ռ. 15 կ.։

Նւիրատուներն են.

Յ. Քէչիչեան 3 ռ., Տ. Վարդանեան, Դ. Էքմէքճեան, Խ. Վարդանեան, Ա., Գ., Յ. և Հ. Զօրպաճեաններ, Օ. Յակոբեան, Ե. Քէչիչեան, Մ. Խըտըչեան, Տ. Քրսանտոպուլօ 1-ական ռ., Մ. Ճըռիկեան, Յ. Տէկէրմէնճեան, Ե. Զօրպաճեան 50-ակ. կ., Ա. Զօրպաճեան 55 կ., Գ. Զօրպաճեան 10 կ.։

Ուրուդ գիւղից (Արդահանի գ.) Ծննդեան երեկոյեան «Աւետիսից» 50 ռուբ.։

Նւիրատուներն են.

Արամ և Աշոտ Նուրիջանեան 1 ռ., Յ. Մխիթարեան, Կ. Տատիև 50-ակ. կ., Շ. Պետրոսեան 20 կ., Գ. Պետրոսեան 1 ռ., Օ. Մղդսեան 1 ռ. 15 կ., Յ. Արծրուն, Յ. Ծաղիկեան, Ս. Գէորգեան, Յ. Մալմանեան, Կ. Տէր-Գրիգորեան, Յ. Մղդսեան 1-ական ռ., Օմար Էմո-Օղլի 20 կ., Մ. Զաքարեան 25 կ., Կ. Խաչատրեան 10 կ., Մ. Պապիկեան, Գ. Աբէլով 1-ական ռ., Խ. Սարգիսով 20 կ., Խ. Զատոյեան 1 ռ., Յ. Յակոբեան 50 կ., Հ. Գէորգեան 20 կ., Հ. Մալմանեան 26 կ., Յ. Խաչատրեան 5 կ., Ն. Սերոբեան 1 ռ. 15 կ., Յ. Մալմանեան 15 կ., Թ. Անտոնեան 20 կ., Վ. Սարգսեան 15 կ., Մ. Յակոբեան 10 կ., Ե. Երանեան 55 կոպ., Մ. Տէր-Գաբրիէլեան 18 կ., Մ. Աբգարեան 15 կ., Յ. Յովհաննիսեան 50 կ., Մ. Սահակեան 15 կ., Զ. Տէր-Զաքարեան 50 կ., Յ. Յովակիմեան 20 կ., Հ. Սերոբեան, Գ. Գրիգորեան, Ս. Աղնաւուրեան, Հ. Յովակիմեան 1-ական ռ., Ա. Ստեփանեանեան 25 կ., Ս. Տէր-Կարապետեան 3 ռ., Ա. Աբրահամեան 10 կ., Ն. Խաչատրեան 1 ռուբ., Մ. Խաչատրեան 24 կ., Ա. Աղ-նաւուրեան 20 կ., Իսկ. Յովհաննիսեան 15 կ., Հ. Աբրահամեան 11 կ., Հ. Երանեան 1 ռ., Ա. Յարութիւնեան 50 կոպ., Զ. Լոմոյեան 15 կ., Խ. Սողոմոնեան 50 կ., Յ. Խաչատրեան 1 ռ., Վ. Արծրունի 50 կ., Հ. Տէր-Գաբրիէլեան 5 կ., Մ. Յակոբեան 15 կ., Ա. Ծաղիկեան 50 կ., Յ. Յովհաննիսեան 25 կ., Մ. Ղուկիմչեան, Գ. Այվազեան 50-ակ. կ., Հ. Խաչատրեան 1 ռ., Ե. Յովսէփեան 50 կ., Յ. Մկրտչեան 30 կ., Մ. Դանիէլեան 20 կ., Մ. Յակոբեան 50 կ., Վ. Յակոբեան 35 կ., Մ. Խաչատրեան 20 կ., փողացուրկ կանայք իւղ նւիրեցին, որը վաճառեցինք 15 ռուբլով։

Անդիժանի Հայ կանանց «Կարմիր Խաչի» վարչութեան միջոցով հաւաքած 450 ռ.։

Նւիրատուներն են.

Աղիբէկեան Կ., Տէր-Գրիգորեան Ա. 25-ակ. ռ., Շահինեան Ե. 18 ռ., Յարութիւնեան Ծ. 17 ռ., Միրզայեան Մ., Ծատուրեան Թ., Յովհաննիսեան Ա. 15-ակ. ռ., Համբարձումեան Ա., Մելիք-Առաքելեան Յ., Թումասեան Յ., Տէր-Գրիգորեան Ա., Հայրապետեան Խ., Սուլէյմանեան Ա., «Տարօն» ընկերութիւն 10-ակ. ռ., Նարինեան Յ., Սարգսեան Հ. 8-ակ. ռ., Սարգսեան Ա. 6 ռ., Յովհաննիսեան Վ., Տէր-Գրիգորեան Ղ.ք., Երեմեան Գ., Եղբ. Մարտիրոսեաններ, Բարխուդարեան Ն., Եղբ. Ստեփանեաններ 5 ակ. ռուբ., Նասիբեան Ա. 4 ռ., Սուլէյմանեան Ա., Գաբրիէլեան Կ., Գաբրիէլեան Դ., Հայրապետեան Ա., Մեժլումեան Ա., Բաղրեան Զ., Դանիէլեան Ա., Բաղրապետեան Մ., Աւետիսեան Ա., Հայրապետեան Ն., Մինասեան Ա., Ախպերջանեան Ա., Նասիբեան Թ., Մաշուրեան Գ., Մելիք Եղանեան Մ., Դաղայեան Ա., Արալեան Խ., Բաբայեան Ա., Աւանէսեան Փ., Ծատուրեան Յ., Նալբանդեան Մ., Տէր-Գրիգորեան Բ., Տէր-Սրապիոնեան, Աւետիսեան Ա. 3-ակ. ռ., Սուլէյմանեան Հ., Միքայէլեան Կ., Մովսիսեան Ս., Մինասեան Մ., Առաքելեան, Կարապետեան Թ., Ալլահվերդեան Ա., Յակոբջանեան Հ., Միրզաեան Գ., Խանանեան Ա., Աւետիսեան Լ., Գասպարեան, Սուլէյմանեան Մ., Զաքարեան Գ. 2-ակ. ռ., Օհանեան Կ. 1 ռ. 50 կ., Գաբրիէլեան Ս., Մանասեան Ա., Ինջիկեան Մ., Նազարէթեան Յ., Առստամեան Ղ., Սարգսեան Ս., Բարոյեան Ն., Պետրոսեան Տ., Գրիգորեան Տ., Ծաղիկեան Գ., Պետրոսեան Դ., Գէորգեան Խ., Ջալալաբաղցի Ա., Ասրեան Վ., Նիկոլայ, Գրիգորեան Թ., Դանիէլեան Մ., Գրիգորեան Ե., Բարսեղեան Խ., Աղաջանեան Ն., Մեսրոպ, Գալստեան Ա., Շամիր, Մաթէոսեան, Ամիրջանեան Ա., Սարգսեան Ս., ՈՖ, Յարութիւնեան Մ., Տէր-Դաւթեան Հ., Արզումանեան Մ. 1-ակ. ռ., Ներսիսեան, X. X. 50-ական կոպ.։

Ուստ-Լաբինսկայա կայարանից, Ծննդեան երեկոյեան «Աւետիս» ման գալուց 23 ռ. 5 կ. որբերի համար։

Նւիրատուներն են.

Նիկ. Մխիթարեան և Մ. Կաժենիկեան 5-ական ռ., Յ. Աղաջանեան, Գ. Ե. Տէր-Ազարեան, Եղբ. Ջալալեաններ և Ս. Տէր-Ներսիսեան 3-ական ռ., Մ. Մխիթարեան, Խ. Տաթեեան և Մելիք-Պապեան 1-ական ռ.։

Սեւաստապոլ Ծննդեան տօնի առթիւ մի խումբ երիտասարդներից 35 ռ. որբերի համար։

Նւիրատուներն են.

Ս. Էվրանեան 5 ռ., Գ. Քրէմէտճեան, Գ. Զոթուրեան 3-ական ռ., Ա. Սալխանճեան, Աստւածատուր և Գրիգոր 2-ական ռ., Հ. Սաղրեան, Ն. Սաղրեան, Ե. Մահմուդեան, Յ. Պետրոսեան, Մ. Զօրպաճեան, Ա. Էյվատեան, Գ. Սարեան, Հ. Զոթուրեան, Գ. Խաչատուրեան, Շ. Զարացեան, Յ. Մկրտիչեան եւ, Տ. Պապայեան, Մ. Պալաւուրտեան, Յ. Յարութիւնեան, Ա. Ղատիեան, Մ. Սուքիասեան, Ա. Սուքիասեան, Գ. Դարբինեան, Ա. Գէորգեան 1-ական ռբ.։

Տ. տ. Գոհարինէ Նարինեան, Մար. Յովսէփեան և Հռ. Մելիք-Ղարագեօզեանի միջոցով ծխականներից հանգանակած 101 ռբ.։

Կաւարտ գիւղից (Ղափան), ուսուցչուհիներ Եւգինէ Միսրոպեանի և Ա. Զէյթեանի միջոցով հանգանակած 42 ռ. 63 կոպ.։

Նոր ստացել ենք 717 ռ. 83 կ., ունէինք մեզ մօտ 11,855 ռ. 69 կ., նոր յանձնեցինք Ազգային Կենտրոն. Բիւրօին Մշեցի հայ գաղթականների օգտին 1000 ռ. և Թիֆլիսի Տեղեկատու Բիւրօին 50 ռ.։ Մնաց մեզ մօտ 11,523 ռ. 52 կոպէկ։

Խմբագիր՝ Ս. ՍԱՀԱԿԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԿԸ ՓՆՏՌԻՆ ՀԵՏԵՒԵԱԼ ՎԱՆԵՑԻՆԵՐԸ

1) Արճէշի Հասան-Դօլի գիւղից ԳԻՒԼԼԻՋԱՐ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ, փնտռողները են Մարիամ Գասպարեան, Ասլաս, Գոլէ և իրենց եղբայր Սահակ։ Հասցէ՝ Գանձակ, Փիր գիւղ։

2) Շատախի Կախսի գիւղից ԱՐՄԵՆԱԿ և իր եղբայր ՕՀԱՆՆԷՍ ՊՕՂՈՍԵԱՆ։ Փնտռողն է՝ Սաթենիկ Հաջի Տիգրանեան։ Հասցէ՝ Գանձակի Փիր գիւղ։

3) Ռուբէն Զրաղացպանեան 45 տարու, իր երեք տղաներով—Լիզա 8, Ռոզա և Մանուէլ 4 տարու, մեծ գաղթից կորւած։ Հասցէ՝ Ուսպենսկի պերէուլոկ, № 3, Զարուհի Ալէքսանեան։

4) Թաղա-Բահրեզի վրայից Մարիամ Դեղձունեան 24 տարու, իր 4 տղաներով—Աղավարդ, Ալաշի, Նւարդ. Անդրանիկ—մեծ գաղթին կորւած։ Փնտռողն է՝ Նշան Գալուստեան։ Հասցէն՝ Тифлисъ, Пушкинскій пассажъ, № 25, «Տեղեկատու բիւրօ»։ 153 0—2

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Дозв. воен. ценз.

Типографія „МАМУЛЪ“, Лорисъ-Меликовская